



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ
ԳԵՂԱՇԵՆ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔ

գ. Գեղաշեն

13/12/2019

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 13
ԱՎԱԳԱՆՈՒ ՀԵՐԹԱԿԱՆ ՆԻՍՏԻ

Համայնքի ավագանու նիստին ներկա էին ավագանու 7 անդամներ:

Բացակա էր՝ Արման Դավթյանը

Համայնքի ղեկավարի հրավերով ավագանու նիստին մասնակցում էին՝

Նիստը վարում էր համայնքի ղեկավար՝ Տիգրան Հակոբյանը

Նիստը արձանագրում էր աշխատակազմի քարտուղար՝ Լուսինե Հովհաննիսյանը

Լսեցին

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԳԵՂԱՇԵՆ ՀԱՄԱՅՆՔԻ
ԱՎԱԳԱՆՈՒ ՀԵՐԹԱԿԱՆ ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Ձեկ. ՏԻԳՐԱՆ ՀԱԿՈԲՅԱՆ/

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 14-րդ հոդվածի 6-րդ մասով և 16-րդ հոդվածով, համայնքի ավագանին որոշում է.

1. Հաստատել համայնքի ավագանու 2019թվականի դեկտեմբերի 13-ի թիվ 13 հերթական նիստի օրակարգը.

1) Հողամասի նպատակային նշանակությունը փոխելու մասին:

2) Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Գեղաշեն համայնքի վարչական տարածքի 2020թվականի տեղական տուրքերի և վճարների դրույքաչափերը սահմանելու մասին:

3) Գեղաշեն համայնքի ղեկավարի 2020թվականի վարձատրության չափը սահմանելու մասին:

4) Կոտայքի մարզի Գեղաշենի համայնքապետարանի աշխատակազմի 2020թվականի աշխատակազմի քարտուղարին որոշաբաժնի որոշաբաժնի

5) Կոտայքի մարզի Գեղաշեն համայնքի «Մշակույթի տուն» համայնքային ոչ առևտրային կազմակերպության 2020թվականի աշխատակիցների թվաքանակը, հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը հաստատելու մասին:

6) Կոտայքի մարզի Գեղաշեն համայնքում 2020թվականի ընթացքում նոր ծնված երեխայի ընտանիքին դրամական օգնություն տալու մասին:

7) Կոտայքի մարզի Գեղաշեն համայնքում 2020թվականի ընթացքում մահացածի ընտանիքին դրամական օգնություն տալու մասին:

8) Կոտայքի մարզի Գեղաշեն համայնքի սոցիալապես անապահով խավերի սոցիալական պայմանների բարելավման ուղղությամբ 2020թվականի ընթացքում տրվող դրամական օգնությունների մասին:

9) Կամարիսի «Կակաչ» ՊՈԱԿ հաճախող Գեղաշեն համայնքի երեխաների ծնողական վճար փոխանցելու մասին:

10) «Գիտունիկներ» ՍՊԸ հաճախող Գեղաշեն համայնքի երեխաների ծնողական վճար փոխանցելու մասին:

11) Գեղաշեն համայնքի ավագանու 2018 թվականի դեկտեմբերի 21-ի N52-Ն որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին:

10) Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Գեղաշեն համայնքի 2020թվականի բյուջեն հաստատելու մասին:

11) Գեղաշեն համայնքի ղեկավարի 2020թվականի կամավոր լիազորությունների իրականացման կարգը հաստատելու մասին:

12) Համայնքի ավագանու 2020թվականի հերթական նիստերի ժամանակացույցը հաստատելու մասին:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից:

Կողմ-7 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է /կցվում է որոշում N 63-Ա/

Լսեցին
ՀՈՂԱՄԱՍԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՓՈԽԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ՏԻԳՐԱՆ ՀԱԿՈՐՅԱՆ/

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 29-րդ, «Քաղաքաշինության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 143 հոդվածի 5-րդ, կետերի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2011 թվականի դեկտեմբերի 29-ի N 1920-Ն որոշմամբ հաստատված կարգի պահանջներով և հիմք ընդունելով համայնքի պարզեցված գլխավոր հատակագիծը

1. Փոփոխել Գեղաշեն համայնքի վարչական տարածքում գտնվող քաղաքացի Մանե Վարդանյանին սեփականության իրավունքով պատկանող (կադաստրային ծածկագիր 07-023-0206-0012-ից) գյուղատնտեսական նշանակության 0.152755 հա 3-րդ կարգի անջրդի վարելահողից 0.063791 հա հողամասի (համաձայն հատակագծի) նպատակային նշանակությունը բնակավայրերի՝ բնակելի կառուցապատման գործառնական նշանակության:

2. Հողամասի նպատակային նշանակության փոփոխումը ենթակա է պետական գրանցման սեփականատեր Մանե Վարդանյանի կողմից եռամսյա ժամկետում տվյալ պահին գործող հողամասի կադաստրային արժեքների տարբերությունը համայնքի բյուջեի N 900105209176 հաշվեհամարին վճարելուց հետո, որը կազմում է 481304 (չորս հարյուր ութսունմեկ հազար երեք հարյուր չորս) դրամ:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից:

Կողմ-7 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 64-Ա/

Լսեցին

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԳԵՂԱՇԵՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ 2020ԹՎԱԿԱՆԻՆ ՏԵՂԱԿԱՆ ՏՈՒՐՔԵՐԻ ԵՎ ՎՃԱՐՆԵՐԻ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Ձեկ. ՏԻԳՐԱՆ ՀԱԿՈՐՅԱՆ/

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 18-րդ, 19-րդ, 20-րդ կետերով, համայնքի ավագանին որոշում է.

1. Սահմանել Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Գեղաշեն համայնքի վարչական տարածքում 2020 թվականին տեղական տուրքերի և վճարների դրույքաչափերը համաձայն հավելվածներ N1, N2 և N3:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից:

Կողմ-7 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 65-Ն/

Լսեցին

ԳԵՂԱՇԵՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ 2020ԹՎԱԿԱՆԻ ՎԱՐՉԱՏՐՈՒԹՅԱՆ ՉԱՓԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Ձեկ. ՏԻԳՐԱՆ ՀԱԿՈՐՅԱՆ/

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության

1.Գեղաշեն համայնքի ղեկավարի 2020 թվականի վարձատրության չափը սահմանել 340000 (երեք հարյուր քառասուն հազար) դրամ:

2.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում 2020թվականի հունվարի 1-ից:

Կողմ-7 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 66-Ա/

Լսեցին

**ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԳԵՂԱՇԵՆԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
2020ԹՎԱԿԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐԻ ԹՎԱՔԱՆԱԿԸ, ՀԱՍՏԻՔԱՑՈՒՑԱԿԸ ԵՎ
ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ԴՐՈՒՅՔԱԶԱՓԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

/Զեկ. ՏԻԳՐԱՆ ՀԱԿՈՐՅԱՆ/

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 28-րդ կետով, համայնքի ավագանին որոշում է.

1.Հաստատել Կոտայքի մարզի Գեղաշենի համայնքապետարանի աշխատակազմի 2020թվականի աշխատակիցների թվաքանակը, հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը համաձայն հավելվածի:

2.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում 2020թվականի հունվարի 1-ից:

Կողմ-7 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 67-Ա/

Լսեցին

**ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԳԵՂԱՇԵՆ ՀԱՄԱՅՆՔԻ «ՄՇԱԿՈՒՅԹԻ ՏՈՒՆ» ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՈՉ
ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ 2020ԹՎԱԿԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐԻ
ԹՎԱՔԱՆԱԿԸ, ՀԱՍՏԻՔԱՑՈՒՑԱԿԸ ԵՎ ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ԴՐՈՒՅՔԱԶԱՓԵՐԸ
ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

/Զեկ. ՏԻԳՐԱՆ ՀԱԿՈՐՅԱՆ/

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 28-րդ կետով, համայնքի ավագանին որոշում է.

1.Հաստատել Կոտայքի մարզի Գեղաշեն համայնքի «Մշակույթի տուն» համայնքային ոչ առևտրային կազմակերպության 2020թվականի աշխատակիցների թվաքանակը, հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը համաձայն հավելվածի:

2.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում 2020թվականի հունվարի 1-ից:

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 68-Ա/

Լսեցին

ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԳԵՂԱՇԵՆ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ 2020ԹՎԱԿԱՆԻ ԸՆԹԱՑՔՈՒՄ ՆՈՐ ԾՆՎԱԾ ԵՐԵՒԱՅԻ ԸՆՏԱՆԻՔԻՆ ԴՐԱՄԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

/Ձեկ. ՏԻԳՐԱՆ ՀԱԿՈՐՅԱՆ/

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 42-րդ կետով, համայնքի ավագանին որոշում է.

1.Գեղաշեն համայնքում 2020թվականի ընթացքում նոր ծնված երեխայի ընտանիքին համայնքի բյուջեում նախատեսել և տալ 40,000/քառասուն հազար/ ՀՀ դրամ գումար որպես օգնություն:

2.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում 2020թվականի հունվարի 1-ից:

Կողմ-7 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 69-Ա/

Լսեցին

ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԳԵՂԱՇԵՆ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ 2020ԹՎԱԿԱՆԻ ԸՆԹԱՑՔՈՒՄ ՄԱՀԱՑԱԾԻ ԸՆՏԱՆԻՔԻՆ ԴՐԱՄԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

/Ձեկ. ՏԻԳՐԱՆ ՀԱԿՈՐՅԱՆ/

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 42-րդ կետով, համայնքի ավագանին որոշում է.

1.Գեղաշեն համայնքում 2020թվականի ընթացքում մահացածի ընտանիքին համայնքի բյուջեում նախատեսել և տալ 30,000/երեսուն հազար/ ՀՀ դրամ գումար որպես օգնություն:

2.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում 2020թվականի հունվարի 1-ից:

Կողմ-7 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 70-Ա/

Լսեցին

ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԳԵՂԱՇԵՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՍՈՑԻԱԼԱՊԵՍ ԱՆԱՊԱՀՈՎ ԽԱՎԵՐԻ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐԻ ԲԱՐԵԼԱՎՄԱՆ ՈՒՂՂՈՒԹՅԱՄԲ 2020 ԹՎԱԿԱՆԻ ԸՆԹԱՑՔՈՒՄ ՏՐՎՈՂ ԴՐԱՄԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ

/Ձեկ. ՏԻԳՐԱՆ ՀԱԿՈՐՅԱՆ/

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 42-րդ կետով, համայնքի ավագանին որոշում է.

1. Կոտայքի մարզի Գեղաշեն համայնքի բյուջեով նախատեսել գումար համայնքի սոցիալապես անապահով խավերի սոցիալական պայմանների բարելավման ուղղությամբ 2020թվականի ընթացքում տրվող օգնությունների համար: Յուրաքանչյուր դիմումատուին տալ մինչև 20.000/քսան հազար/ ՀՀ դրամ որպես օգնություն: Դիմումների քննարկումը և գումարի տալը թողնել համայնքի ղեկավարի հայեցողությանը:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում 2020թվականի հունվարի 1-ից:

Կողմ-7 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 71-Ա/

Լսեցին

ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2018 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 21-Ի N 52-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ՏԻԳՐԱՆ ՀԱԿՈՐՅԱՆ/

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի առաջին մասի 5-րդ կետով, «Նորմատիվ Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետով, համայնքի ավագանին որոշում է.

1. Համայնքի ավագանու 2018 թվականի դեկտեմբերի 21-ի «Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Գեղաշեն համայնքի 2019 թվականի տարեկան բյուջեն հաստատելու մասին» N 52-Ն որոշմամբ հաստատված հավելվածի հատվածներում կատարել փոփոխություններ, համաձայն նոր հավելվածների:

Կողմ-7 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 72-Ն/

Լսեցին

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԳԵՂԱՇԵՆ ՀԱՄԱՅՆՔԻ 2020ԹՎԱԿԱՆԻ ՏԱՐԵԿԱՆ ԲՅՈՒՋԵՆ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ՏԻԳՐԱՆ ՀԱԿՈՐՅԱՆ/

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետով և «Հայաստանի Հանրապետության Բյուջետային համակարգի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 32-րդ հոդվածի և 33-րդ հոդվածի 3-րդ մասով, համայնքի ավագանին որոշում է.

1. Հաստատել Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Գեղաշեն համայնքի 2020թվականի տարեկան բյուջեն համաձայն հավելվածների:

2. Թույլատրել համայնքի ղեկավարին համայնքի բյուջեում կատարել 15%-ի չափով

Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ հոդվածի 3-րդ մասի դրույթներով նախատեսված կարգով:

3.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

Կողմ-7 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 73-Ն/

Լսեցին

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԳԵՂԱՇԵՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԿԱՄԱՎՈՐ ԽՆԴԻՐՆԵՐԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ԵՎ ԴՐԱՆՑ ԼՈՒԾՄԱՆՆ ՈՒՂՂՎԱԾ ՍԵՓԱԿԱՆ ԼԻԱԶՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ՏԻԳՐԱՆ ՀԱԿՈՐՅԱՆ/

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 10-րդ հոդվածի 10-րդ, 11-րդ մասերի, 18-րդ հոդվածի 1-ին մասի 7-րդ կետի պահանջներով, համայնքի ավագանին որոշում է.

1.Սահմանել Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Գեղաշեն համայնքի կամավոր խնդիրները և դրանց լուծմանն ուղղված սեփական լիազորությունների իրականացման կարգը՝ համաձայն N 1 հավելվածի:

2.Սահմանել Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Գեղաշեն համայնքի սոցիալական աջակցության վերաբերյալ կամավոր խնդիրների լուծման չափորոշիչները՝ համաձայն հավելված N 2-ի:

3.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

Կողմ-7 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 74-Ն/

Լսեցին

ԿԱՄԱՐԻՍԻ «ԿԱԿԱԶ» ՀՈԱԿ ՀԱՃԱԽՈՂ ԳԵՂԱՇԵՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԵՐԵԽԱՆՆԵՐԻ ԾՆՈՂԱԿԱՆ ՎՃԱՐ ՓՈԽԱՆՑԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ՏԻԳՐԱՆ ՀԱԿՈՐՅԱՆ/

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածով, համայնքի ավագանին որոշում է.

1.Կոտայքի մարզի Կամարիս համայնքի մանկապարտեզ «Կակաչ» ՀՈԱԿ Գեղաշեն համայնքից հաճախող յուրաքանչյուր երեխայի ծնողական վճարի 9000 /ինը հազար/ հի

2.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

Կողմ-7 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 75-Ա/

Լսեցին

«ԳԻՏՈՒՆԻԿՆԵՐ» ՍՊԸ ՀԱՃԱԽՈՂ ԳԵՂԱՇԵՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԵՐԵՒԱՆԵՐԻ ԾՆՈՂԱԿԱՆ ՎՃԱՐ ՓՈԽԱՆՑԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Ձեկ. ՏԻԳՐԱՆ ՀԱԿՈՐՅԱՆ/

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածով, համայնքի ավագանին որոշում է.

1.Կոտայքի մարզի Գեղաշեն համայնքի «Գիտունիկներ» ՍՊԸ Գեղաշեն համայնքից հաճախող յուրաքանչյուր երեխայի ծնողական վճարի 9000 /ինը հազար/ հի դրամը 2019թվականի համար փոխանցել Գեղաշեն համայնքի բյուջեից:

2.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից:

Կողմ-7 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 76-Ա/

Լսեցին

ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2020ԹՎԱԿԱՆԻ ՀԵՐԹԱԿԱՆ ՆԻՍՏԵՐԻ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Ձեկ. ՏԻԳՐԱՆ ՀԱԿՈՐՅԱՆ/

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 13-րդ հոդվածի 3-րդ կետով համայնքի ավագանին որոշում է.

1.Հաստատել Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Գեղաշեն համայնքի ավագանու 2020թվականի հերթական նիստերի ժամանակացույցը համաձայն հավելվածի:

2.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում 2020թվականի հունվարի 1-ից:

Կողմ-7 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 77-Ն/

ՎԱՆԻԿ ԱՎԱԳՅԱՆ

[Handwritten signature]

ՆԱԻՐԱ ԲԱԲԱՅԱՆ

[Handwritten signature]

ԱՏՈՄ ԲԱԴԱԼՅԱՆ

[Handwritten signature]

ԱՐԱՄ ԳՐԻԳՈՐՅԱՆ

[Handwritten signature]

ԲԱՐՍԵՂ ԳՐԻԳՈՐՅԱՆ

[Handwritten signature]

ԱՆԴՐԱՆԻԿ ԴԱՎԹՅԱՆ

[Handwritten signature]

ՍԵՎԱԿ ԽԱԶԱՏՐՅԱՆ

Համայնքի նախագահ



ՏԻԳՐԱՆ ՀԱԳՈՐԾՅԱՆ

[Handwritten signature]

Նիստին արձանագրեց՝

Լուսինե Հովհաննիսյանը

[Handwritten signature]



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՇԵՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Գեղաշեն համայնք
ՀՀ, Կոտայքի մարզ, գ. Գեղաշեն, 060286014 gechashen67@mail.ru

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

13 ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 2019թվականի N 63-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԳԵՂԱՇԵՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՀԵՐԹԱԿԱՆ ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 14-րդ հոդվածի 6-րդ մասով և 16-րդ հոդվածով, համայնքի ավագանին որոշում է.

1. Հաստատել համայնքի ավագանու 2019թվականի դեկտեմբերի 13-ի թիվ 13 հերթական նիստի օրակարգը.

1) Հողամասի նպատակային նշանակությունը փոխելու մասին:

2) Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Գեղաշեն համայնքի վարչական տարածքի 2020թվականի տեղական տուրքերի և վճարների դրույքաչափերը սահմանելու մասին:

3) Գեղաշեն համայնքի ղեկավարի 2020թվականի վարձատրության չափը սահմանելու մասին:

4) Կոտայքի մարզի Գեղաշենի համայնքապետարանի աշխատակազմի 2020թվականի աշխատակիցների թվաքանակը, հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը հաստատելու մասին:

5) Կոտայքի մարզի Գեղաշեն համայնքի «Մշակույթի տուն» համայնքային ոչ առևտրային կազմակերպության 2020թվականի աշխատակիցների թվաքանակը, հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը հաստատելու մասին:

6) Կոտայքի մարզի Գեղաշեն համայնքում 2020թվականի ընթացքում նոր ծնված երեխայի ընտանիքին դրամական օգնություն տալու մասին:

7) Կոտայքի մարզի Գեղաշեն համայնքում 2020թվականի ընթացքում մահացածի ընտանիքին դրամական օգնություն տալու մասին:

8) Կոտայքի մարզի Գեղաշեն համայնքի սոցիալապես անապահով խավերի սոցիալական պայմանների բարելավման ուղղությամբ 2020թվականի ընթացքում տրվող դրամական օգնությունների մասին:

ԹՅԱԼ: Կոտայքի Գեղաշեն համայնքի երեխաների ծնողական

10) «Գիտունիկներ» ՍՊԸ հաճախող Գեղաշեն համայնքի երեխաների ծնողական վճար փոխանցելու մասին:

11) Գեղաշեն համայնքի ավագանու 2018 թվականի դեկտեմբերի 21-ի N52-Ն որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին:

10) Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Գեղաշեն համայնքի 2020 թվականի բյուջեն հաստատելու մասին:

11) Գեղաշեն համայնքի ղեկավարի 2020 թվականի կամավոր լիազորությունների իրականացման կարգը հաստատելու մասին:

12) Համայնքի ավագանու 2020 թվականի հերթական նիստերի ժամանակացույցը հաստատելու մասին:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից:

Կողմ -7

Դեմ -0

Ձեռնպահ -0

ԱՎԱԳՅԱՆ ՎԱՆԻԿ

ԲԱԲԱՅԱՆ ՆԱԻՐԱ

ԲԱԴԱԼՅԱՆ ԱՏՈՄ

ԳՐԻԳՈՐՅԱՆ ԱՐԱՄ

ԳՐԻԳՈՐՅԱՆ ԲԱՐՍԵՂ

ԴԱՎԹՅԱՆ ԱՆԴՐԱՆԻԿ

ԽԱԶԱՏՐՅԱՆ ՍԵՎԱԿ

(Handwritten signatures in blue ink)

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ՏԻԳՐԱՆ ՀԱԿՈԲՅԱՆ





ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՇԵՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Գեղաշեն համայնք
ՀՀ, Կոտայքի մարզ, գ. Գեղաշեն, 060286014 gechashen67@mail.ru

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

20 ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 2019 թվականի N 64-Ա

ՀՈՂԱՄԱՍԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՓՈԽԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 29-րդ, «Քաղաքաշինության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 143 հոդվածի 5-րդ, կետերի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2011 թվականի դեկտեմբերի 29-ի N 1920-Ն որոշմամբ հաստատված կարգի պահանջներով և հիմք ընդունելով համայնքի պարզեցված գլխավոր հատակագիծը ու Մանե Վարդանյանի դիմումը համայնքի ավագանին որոշում է.

1. Փոփոխել Գեղաշեն համայնքի վարչական տարածքում գտնվող քաղաքացի Մանե Վարդանյանին սեփականության իրավունքով պատկանող (կադաստրային ծածկագիր 07-023-0206-0012-ից) գյուղատնտեսական նշանակության 0.152755 հա 3-րդ կարգի անջրդի վարելահողից 0.063791 հա հողամասի (համաձայն հատակագծի) նպատակային նշանակությունը բնակավայրերի՝ բնակելի կառուցապատման գործառնական նշանակության:

2. Հողամասի նպատակային նշանակության փոփոխումը ենթակա է պետական գրանցման սեփականատեր Մանե Վարդանյանի կողմից եռամսյա ժամկետում տվյալ պահին գործող հողամասի կադաստրային արժեքների տարբերությունը համայնքի բյուջեի N 900105209176 հաշվեհամարին վճարելուց հետո, որը կազմում է 481304 (չորս հարյուր ութսունմեկ հազար երեք հարյուր չորս) դրամ:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից:

Կողմ -7

Դեմ -0

Ձեռնպահ -0

ԱՎԱԳՅԱՆ ՎԱՆԻԿ

ԲԱԲԱՅԱՆ ՆԱԻՐԱ

ԲԱԴԱԼՅԱՆ ԱՏՈՄ

ԳՐԻԳՈՐՅԱՆ ԱՐԱՄ

ԳՐԻԳՈՐՅԱՆ ԲԱՐՍԵՂ

ԴԱՎԹՅԱՆ ԱՆԴՐԱՆԻԿ

ԽԱԶԱՏՐՅԱՆ ՍԵՎԱԿ



7.3



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՇԵՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Գեղաշեն համայնք
ՀՀ, Կոտայքի մարզ, գ. Գեղաշեն, 060286014 gechashen67@mail.ru

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

13 ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 2019 թվականի N 65-Ն

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԳԵՂԱՇԵՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ 2020 ԹՎԱԿԱՆԻՆ ՏԵՂԱԿԱՆ ՏՈՒՐՔԵՐԻ ԵՎ ՎՃԱՐՆԵՐԻ ԴՐՈՒՅՔԱԶԱՓԵՐԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 18-րդ, 19-րդ, 20-րդ կետերով, համայնքի ավագանին որոշում է.

1. Սահմանել Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Գեղաշեն համայնքի վարչական տարածքում 2020 թվականին տեղական տուրքերի և վճարների դրույքաչափերը համաձայն հավելվածներ N1, N2 և N3:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

Կողմ -7

Դեմ -0

Ձեռնպահ -0

ԱՎԱԳՅԱՆ ՎԱՆԻԿ

ԲԱՐԱՅԱՆ ՆԱԻՐԱ

ԲԱԴԱԼՅԱՆ ԱՏՈՄ

ԳՐԻԳՈՐՅԱՆ ԱՐԱՄ

ԳՐԻԳՈՐՅԱՆ ԲԱՐՍԵՂ

ԴԱՎԹՅԱՆ ԱՆԴՐԱՆԻԿ

ԽԱԶԱՏՐՅԱՆ ՍԵՎԱԿ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ՏԻԳՐԱՆ ՀԱԿՈՐՅԱՆ





ԳԵՂԱՇԵՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՏԱՌԱՎՐՈՒՄ 2020 ԹՎԱԿԱՆԻ ՏԵՂԱԿԱՆ ՏՈՒՐՔԵՐԻ ԴՐՈՒՅՔԱԶԱՓԵՐԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

1. Գեղաշեն համայնքում սահմանել տեղական տուրքերի հետևյալ դրույքաչափերը.

1) Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով հաստատված ճարտարապետաշինարարական նախագծին համապատասխան՝ համայնքի վարչական տարածքում նոր շենքերի, շինությունների և ոչ հիմնական շինությունների շինարարության (տեղադրման) (բացառությամբ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված շինարարության թույլտվություն չպահանջող դեպքերի) թույլտվության համար՝

ա. հիմնական շենքերի և շինությունների համար՝

մինչև 300 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող անհատական բնակելի, այդ թվում՝ այգեգործական (ամառանոցային) տների, ինչպես նաև մինչև 200 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հասարակական և արտադրական նշանակության շենքերի և շինությունների համար՝ տասնհինգ հազար դրամ,

բ. սույն կետի «ա» ենթակետով չնախատեսված շենքերի և շինությունների համար՝

- 200-ից մինչև 500 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող շենքերի և շինությունների համար՝ երեսուն հազար դրամ,

- 500-ից մինչև 1000 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող շենքերի և շինությունների համար՝ հիսուն հազար դրամ,

- 1000-ից մինչև 3000 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող շենքերի և շինությունների համար՝ հիսուն հազար դրամ,

- 3000-ից և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող շենքերի և շինությունների համար՝ հարյուր հազար դրամ,

գ. ոչ հիմնական շենքերի և շինությունների համար՝

- մինչև 20 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող շենքերի և շինությունների համար՝ երեք հազար դրամ,

- 20 և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող շենքերի և շինությունների համար՝ հինգ հազար դրամ.

2) համայնքի վարչական տարածքում գոյություն ունեցող շենքերի և շինությունների վերակառուցման, վերականգնման, ուժեղացման, արդիականացման և բարեկարգման աշխատանքների (բացառությամբ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված շինարարության թույլտվություն չպահանջվող դեպքերի) թույլտվության համար, եթե սահմանված կարգով հաստատված ճարտարապետաշինարարական նախագծով՝

ա. չի նախատեսվում կցակառույցների, վերնակառույցների, շենքի գաբարիտային չափերն ընդլայնող այլ կառույցների (այդ թվում՝ ստորգետնյա) հետևանքով օբյեկտի ընդհանուր մակերեսի ավելացում կամ շենքերի գործառական նշանակության փոփոխություն՝ երեք հազար դրամ,

բ. բացի շենքերի և շինությունների վերակառուցման, ուժեղացման, վերականգնման կամ արդիականացման աշխատանքներից, նախատեսվում է նաև կցակառույցների, վերնակառույցների, շենքի տրամաչափային չափերն ընդլայնող այլ կառույցների (այդ թվում՝ ստորգետնյա) հետևանքով օբյեկտի ընդհանուր մակերեսի ավելացում կամ շենքերի գործառական նշանակության փոփոխություն, և, բացի սույն կետի «ա» ենթակետով սահմանված դրույքաչափից, կիրառվում են նաև նոր շինարարության համար սույն հավելվածի 1-ին կետի 1-ին ենթակետով սահմանված նորմերը և դրույքաչափերը՝ շենքերի և շինությունների ընդհանուր մակերեսի ավելացման կամ շենքերի գործառական նշանակության փոփոխության մասով.

գ. նախատեսվում է միայն կցակառույցների, վերնակառույցների, շենքի գաբարիտային չափերն ընդլայնող այլ կառույցների (այդ թվում՝ ստորգետնյա) շինարարություն կամ շենքերի գործառական նշանակության փոփոխություն, ապա, այն համարվում է նոր շինարարություն, որի նկատմամբ կիրառվում են նոր շինարարության համար սույն հավելվածի 1-ին կետի 1-ին ենթակետով սահմանված նորմերը.

3) համայնքի վարչական տարածքում շենքերի, շինությունների և քաղաքաշինական այլ օբյեկտների քանդման (բացառությամբ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված քանդման թույլտվություն չպահանջվող դեպքերի) թույլտվության համար՝ հինգ հազար դրամ.

4) համայնքի վարչական տարածքում հեղուկ վառելիքի, սեղմված բնական կամ հեղուկացված նավթային գազերի վաճառքի թույլտվության համար՝ օրացուցային տարվա համար՝ երկու հարյուր հազար դրամ.

5) համայնքի վարչական տարածքում գտնվող խանութներում և կրպակներում հեղուկ վառելիքի, սեղմված բնական կամ հեղուկացված նավթային գազերի, մանրածախ առևտրի կետերում կամ ավտոմեքենաների տեխնիկական սպասարկման և նորոգման ծառայության օբյեկտներում տեխնիկական հեղուկների վաճառքի թույլտվության համար՝ օրացուցային տարվա համար՝ երեսուն հազար դրամ.

6) համայնքի վարչական տարածքում թանկարժեք մետաղներից պատրաստված իրերի որոշակի վայրում մանրածախ առք ու վաճառք իրականացնելու թույլտվության համար՝ օրացուցային տարվա համար՝ հիսուն հազար դրամ.

7) համայնքի վարչական տարածքում ոգելից և ալկոհոլային խմիչքների և (կամ) ծխախոտի արտադրանքի վաճառքի թույլտվության համար՝

ա. ոգելից և ալկոհոլային խմիչքի վաճառքի թույլտվության համար՝ յուրաքանչյուր եռամսյակի համար՝

- մինչև 26 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ երեք հազար դրամ,

- 26-ից մինչև 50 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ հինգ հազար երկու հարյուր դրամ,

- 50-ից մինչև 100 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ վեց հազար յոթ հարյուր դրամ,

- 100-ից մինչև 200 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ տաս հազար հինգ հարյուր դրամ,

- 200-ից մինչև 500 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ տասնհինգ հազար դրամ,

- 500 և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ քսանհինգ հազար դրամ.

բ. ծխախոտի արտադրանքի վաճառքի թույլտվության համար՝ յուրաքանչյուր եռամսյակի համար՝

- մինչև 26 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ երեք հազար դրամ,

- 26-ից մինչև 50 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ հինգ հազար երկու հարյուր դրամ,

- 50-ից մինչև 100 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ վեց հազար յոթ հարյուր դրամ,

- 100-ից մինչև 200 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ տաս հազար հինգ հարյուր դրամ,

- 200-ից մինչև 500 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ տասնհինգ հազար դրամ,

- 500 և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ քսանհինգ հազար դրամ.

8) իրավաբանական անձանց և անհատ ձեռնարկատերերին համայնքի վարչական տարածքում «Առևտրի և ծառայությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված՝ բացօթյա առևտրի կազմակերպման թույլտվության համար՝ յուրաքանչյուր օրվա համար՝ հարյուր յոթանասունհինգ դրամ՝ մեկ քառակուսի մետրի համար.

9) համայնքի վարչական տարածքում առևտրի, հանրային սննդի, զվարճանքի, շահումով խաղերի և վիճակախաղերի կազմակերպման օբյեկտներին, խաղատներին և բաղնիքներին (սաունաներին) ժամը 24.00-ից հետո աշխատելու թույլտվության համար՝ օրացուցային տարվա համար՝

ա. առևտրի օբյեկտների համար՝ հինգ հազար դրամ,

բ. հանրային սննդի և զվարճանքի օբյեկտների համար՝ քսանհինգ հազար դրամ,

գ. բաղնիքների (սաունաների) համար՝ երկու հարյուր հազար դրամ,

դ. խաղատների համար՝ հինգ հարյուր հազար դրամ,

ե. շահումով խաղերի համար՝ երկու հարյուր հիսուն հազար դրամ,

զ. վիճակախաղերի համար՝ հարյուր հազար դրամ.

10) համայնքի վարչական տարածքում, համայնքային կանոններին համապատասխան, հանրային սննդի կազմակերպման և իրացման թույլտվության համար տեղական տուրքը յուրաքանչյուր եռամսյակի համար սահմանվում է՝

ա. հիմնական շինությունների ներսում՝

- մինչև 26 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ երկու հազար դրամ,

- 26-ից մինչև 50 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ չորս հազար դրամ,

- 50-ից մինչև 100 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ վեց հազար դրամ,

- 100-ից մինչև 200 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ ութ հազար դրամ,

- 200-ից մինչև 500 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ տասներկու հազար դրամ,

- 500 և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ քսան հազար դրամ.

բ. ոչ հիմնական շինությունների ներսում՝

- մինչև 26 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ հինգ հարյուր դրամ,

- 26-ից մինչև 50 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ հազար դրամ,

- 50-ից մինչև 100 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ երկու հազար դրամ,

- 100-ից մինչև 200 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ չորս հազար դրամ,

- 200-ից մինչև 500 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ յոթ հազար հինգ հարյուր դրամ,

- 500 և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ տասներկու հազար հինգ հարյուր դրամ.

11) ավագանու սահմանած կարգին ու պայմաններին համապատասխան՝ համայնքի վարչական տարածքում արտաքին գովազդ տեղադրելու թույլտվության համար, բացառությամբ միջպետական ու հանրապետական նշանակության ավտոմոբիլային ճանապարհների օտարման շերտերում և պաշտպանական գոտիներում տեղադրվող գովազդների թույլտվությունների, յուրաքանչյուր ամիս մեկ քառակուսի մետրի համար՝

ա. ավտոմոբիլային սպիրտի պարունակությունը մինչև 20 ծավալային տոկոս արտադրանք գովազդող արտաքին գովազդի համար՝ հազար դրամ,

բ. թունդ ակոհոլային (սպիրտի պարունակությունը 20 և ավելի ծավալային տոկոս) արտադրանք գովազդող արտաքին գովազդի համար՝ հազար յոթ հարյուր հիսուն դրամ,

գ. սոցիալական գովազդի համար՝ զրո դրամ,

դ. այլ արտաքին գովազդի համար՝ յոթ հարյուր հիսուն դրամ,

ե. դատարկ գովազդային վահանակների համար՝ համայնքի վարչական տարածքում այլ արտաքին գովազդ տեղադրելու թույլտվության համար սահմանված տուրքի 25 %-ի չափով,

զ. եթե արտաքին գովազդ տարածող գովազդակիրը տեղաբաշխել և տարածել է իր կազմակերպության գովազդը՝ համայնքի վարչական տարածքում այլ արտաքին գովազդ տեղադրելու թույլտվության համար սահմանված տուրքի 10 %-ի չափով.

12) համայնքի խորհրդանիշերը (զինանշան, անվանում և այլն), որպես օրենքով գրանցված ապրանքային նշան, ապրանքների արտադրության, աշխատանքների կատարման, ծառայությունների մատուցման գործընթացներում օգտագործելու թույլտվության համար՝ օրացուցային տարվա համար՝ հիսուն հազար դրամ.

13) համայնքի վարչական տարածքում մարդատար-տաքսու (բացառությամբ երթուղային տաքսիների՝ միկրոավտոբուսների) ծառայություն իրականացնելու թույլտվության համար՝ օրացուցային տարում յուրաքանչյուր մեքենայի համար՝ հինգ հազար դրամ.

14) համայնքի վարչական տարածքում քաղաքացիական հոգեհանգստի (հրաժեշտի) ծիսակատարության ծառայությունների իրականացման և (կամ) մատուցման թույլտվության համար՝ օրացուցային տարվա համար՝ երկու հարյուր հիսուն հազար դրամ.

15) համայնքի վարչական տարածքում մասնավոր գերեզմանատան կազմակերպման և շահագործման թույլտվության համար՝ օրացուցային տարվա համար՝

ա. 3 հա-ից մինչև 5 հա մակերես ունեցող գերեզմանատների համար՝ երկու միլիոն հինգ հարյուր հազար դրամ,

բ. 5 հա-ից մինչև 7 հա մակերես ունեցող գերեզմանատների համար՝ հինգ միլիոն դրամ,

գ. 7 հա-ից մինչև 10 հա մակերես ունեցող գերեզմանատների համար՝ յոթ միլիոն դրամ,

դ. 10 հա-ից ավել մակերես ունեցող գերեզմանատների համար՝ տասը միլիոն դրամ:

2. Սույն հավելվածի 1-ին կետի 5-րդ, 7-րդ, 8-րդ, 10-րդ, 11-րդ, 12-րդ, 13-րդ և 14-րդ ենթակետերում դրույքաչափերը հաշվարկվել են 0,5 գործակցի կիրառմամբ:



ԳԵՂԱՇԵՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ 2020 ԹՎԱԿԱՆԻ ՏԵՂԱԿԱՆ ՎՃԱՐՆԵՐԻ ԴՐՈՒՅՔԱԶԱՓԵՐԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

1. Գեղաշեն համայնքում սահմանել տեղական վճարների հետևյալ դրույքաչափերը
 - 1) Համայնքի տարածքում շենքի կամ շինության արտաքին տեսքը փոփոխող վերակառուցման աշխատանքներ կատարելու հետ կապված տեխնիկատնտեսական պայմաններ մշակելու և հաստատելու համար՝ համայնքի մատուցած ծառայությունների դիմաց փոխհատուցման վճար՝ տասը հազար դրամ,
 - 2) ճարտարապետաշինարարական նախագծային փաստաթղթերով նախատեսված շինարարության թույլտվություն պահանջող, բոլոր շինարարական աշխատանքներն իրականացնելուց հետո շենքերի և շինությունների (այդ թվում՝ դրանց վերակառուցումը, վերականգնումը, ուժեղացումը, արդիականացումը, ընդլայնումն ու բարեկարգումը) կառուցման ավարտը ավարտական ակտով փաստագրման ձևակերպման համար՝ համայնքի մատուցած ծառայությունների դիմաց փոխհատուցման վճար՝ տասը հազար դրամ,
 - 3) ճարտարապետաշինարարական նախագծային փաստաթղթերով նախատեսված աշխատանքներն ավարտելուց հետո շահագործման թույլտվության ձևակերպման համար՝ համայնքի մատուցած ծառայությունների դիմաց փոխհատուցման վճար՝ տասը հազար դրամ,
 - 4) համայնքի տնօրինության և օգտագործման ներքո գտնվող հողերը հատկացնելու, հետ վերցնելու և վարձակալության տրամադրելու դեպքերում փաստաթղթերի (փաթեթի) նախապատրաստման համար՝ համայնքի մատուցած ծառայությունների դիմաց փոխհատուցման վճար՝ վաթսուհինգ հազար դրամ,
 - 5) համայնքի կողմից կազմակերպվող մրցույթների և աճուրդների մասնակցության համար՝ համայնքի մատուցած ծառայությունների դիմաց փոխհատուցման վճար՝ տասը հազար դրամ:
 - 6) համայնքի կողմից աղբահանության դիմաց գանձվող վճարները 2020թվականի համար սահմանել հետևյալ կերպ՝

N	Աղբահանության վճարի տեսակները	Դրույքաչափերը (դրամ)
1.	Կենցաղային աղբի համար	
1)	Անձնագրային հաշվառման կանոններով ըստ հասցեի հաշվառում ունեցող և /կամ/ բնակվող յուրաքանչյուր բնակչի համար ամսական	150(մեկ հարյուր հիսուն)
2)	Բնակելի շինության կամ բնակարանի ընդհանուր մակերեսի՝ 1քմ մակերեսի ամսական	15(տասնհինգ)
2.	Ոչ կենցաղային և խոշոր եզրաչափի աղբի համար՝	
1)	ըստ ծավալի՝ մեկ խորանարդ մետր աղբի համար	3000(երեք հազար)
2)	ըստ զանգվածի՝ մեկ տոննա աղբի համար	10000(տասը հազար)

6.1) Սույն աղյուսակի 2-րդ կետով նախատեսված աղբի ծավալը կամ զանգվածը որոշելու համար (պարզելու) անհնարինության դեպքում, այդ թվում՝ տեխնիկական, աղբահանության վճարի հաշվարկը կատարվում է հետորյալ ամսական դրույքաչափերով՝

Հ/հ	Ոչ կենցաղային և խոշոր եզրաչափի օբյեկտների անվանումները	Չափման միավորը	Ամսական վճարի չափը (դրամ)
-----	--	----------------	---------------------------

I. Առևտրի օբյեկտներ			
1.	Մթերային խանութներ, հանրախանութներ	1քմ	50(հիսուն)
2.	Շինանյութի, տնտեսական ապրանքների խանութներ, սուպերմարկետներ	1քմ	50(հիսուն)
3.	Գյուղմթերքի շուկաներ, բանջարեղենի և շաղկի խանութներ	1քմ	50(հիսուն)
II. Բժշկական հաստատություններ			
1.	Դեղատներ	1քմ	15(տասնհինգ)
2.	Հիվանդանոցներ	1քմ	15(տասնհինգ)
III. Ավտոտրանսպորտի սպասարկման օբյեկտներ			
1.	Ավտոարհեստանոցներ, բենզալցակայաններ, գազալցակայաններ	1քմ	50(հիսուն)
2.	Ավտովագման կետեր	1քմ	50(հիսուն)
IV. Ուսումնական հաստատություններ			
1.	Դպրոցներ, մանկապարտեզներ, ուսումնարաններ, համալսարաններ, քոլեջներ	Դսան	5(հինգ)
V. Կենցաղային սպասարկման ձեռնարկություններ			
1.	Վարսահարդարման և գեղեցության սրահներ	1քմ	50(հիսուն)
2.	Հյուրանոցներ, հասարակական սենդի օբյեկտներ, հասարակական այլ ծառայություններ սպասարկող օբյեկտներ	1քմ	50(հիսուն)
VI. Մշակութային և սպորտային հաստատություններ			
1.	Ակումբեր, կինոթատրոններ, համերգասրահներ, քատրոններ, գրադարաններ	1տեղին	5(հինգ)
VII. Արտադրական ձեռնարկություններ			
1.	Գործարաններ	1քմ	5(հինգ)
2.	Հացա-բուլեղենի արտադրության տարածքներ	1քմ	50(հիսուն)

7) Համայնքի ղեկավարի կողմից շինարարական և խոշոր եզրաչափի աղբի հավաքման և փոխադրման համար տրամադրվող թույլտվության համար գանձվող տեղական վճարի դրույքաչաճերը 2020թվականի համար գանձել հետևյալ կերպ

N	Թույլտվության վճարի տեսակը	Դրույքաչափերը (դրամ)
1.	Շինարարական և խոշոր եզրաչափի աղբի՝ ըստ ծավալի մեկ խորանարդ մետրի հավաքման և տեղափոխման թույլտվության համար	1000(մեկ հազար)
2.	Շինարարական և խոշոր եզրաչափի աղբի՝ ըստ գանձվածի մեկ տոննայի հավաքման և տեղափոխման թույլտվության համար	2500(երկու հազար հինգ հարյուր)

8) համայնքի կողմից ջրօգտագործման վճար վճարողների համար մեկ ծորակի արժեք սահմանել

ա.համայնքում առկա անհատական տների յուրաքանչյուր ծորակի համար՝ ամսեկան հինգ հարյուր դրամ

բ.համայնքում առկա արտադրական, հասարակական շինությունների յուրաքանչյուր ծորակի համար՝ ամսեկան մեկ հազար դրամ:

9)համայնքի արխիվից փաստաթղթերի պատճեններ տրամադրելու համար՝ մեկ փաստաթղթի համար՝ հինգ հարյուր դրամ:



Հավելված 3
Հաստատված
Համայնքի ավագանու 2019թվականի
Դեկտեմբերի 13-ի N65-Ն որոշմամբ

ԳԵՂԱՇԵՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՏԱՐԿԵՐՈՒՄ 2020 ԹՎԱԿԱՆԻ ՏԵՂԱԿԱՆ ՎՃԱՐՆԵՐԻ ԴՐՈՒՅՔԱԶԱՓԵՐԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

1. Համայնքային ենթակայության արտադարձական դաստիարակության հաստատության ծառայություններից օգտվողների համար՝ մեկ երեխայի հաշվարկով (ամիսը)
 - ա) դաշնամուրային բաժին-3000 դրամ,
 - բ) դիտլի բաժին-3000 դրամ
 - գ) քանոնի բաժին-3000 դրամ
 - դ) շվի բաժին-3000 դրամ
 - ե) նկարչության խմբակ-3000 դրամ
 - զ) պարի խմբակ-2000 դրամ
 - է) ֆուտբոլի խմբակ-0 դրամ



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՇԵՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Գեղաշեն համայնք
ՀՀ, Կոտայքի մարզ, գ. Գեղաշեն, 060286014 gechashen67@mail.ru

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

13 ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 2019 թվականի N 66-Ա

ԳԵՂԱՇԵՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԴԵԿԱՎԱՐԻ 2020 ԹՎԱԿԱՆԻ ՎԱՐՁԱՏՐՈՒԹՅԱՆ ՉԱՓԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 11-րդ կետով, համայնքի ավագանին որոշում է.

1. Գեղաշեն համայնքի ղեկավարի 2020 թվականի վարձատրության չափը սահմանել 340000 (երեք հարյուր քառասուն հազար) դրամ:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում 2020 թվականի հունվարի 1-ից:

Կողմ -7

Դեմ -0

Ձեռնպահ -0

ԱՎԱԳՅԱՆ ՎԱՆԻԿ

ԲԱԲԱՅԱՆ ՆԱԻՐԱ

ԲԱԴԱԼՅԱՆ ԱՏՈՄ

ԳՐԻԳՈՐՅԱՆ ԱՐԱՄ

ԳՐԻԳՈՐՅԱՆ ԲԱՐՍԵՂ

ԴԱՎԹՅԱՆ ԱՆԴՐԱՆԻԿ

ԽԱՉԱՏՐՅԱՆ ՍԵՎԱԿ

ՀԱՄԱՅՆՔԻ ԴԵԿԱՎԱՐ

ՏԻԳՐԱՆ ՀԱԿՈՐՅԱՆ





ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՇԵՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Գեղաշեն համայնք
ՀՀ, Կոտայքի մարզ, գ. Գեղաշեն, 060286014 gechashen67@mail.ru

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

13 ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 2019թվականի N 67-Ա

**ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԳԵՂԱՇԵՆԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
2020ԹՎԱԿԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐԻ ԹՎԱՔԱՆԱԿԸ, ՀԱՍՏԻՔԱՑՈՒՑԱԿԸ ԵՎ
ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ԴՐՈՒՅՔԱԶԱՓԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 28-րդ կետով, համայնքի ավագանին որոշում է.

1. Հաստատել Կոտայքի մարզի Գեղաշենի համայնքապետարանի աշխատակազմի 2020թվականի աշխատակիցների թվաքանակը, հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը համաձայն հավելվածի:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում 2020թվականի հունվարի 1-ից:

Կողմ -7

Դեմ -0

Ձեռնպահ -0

ԱՎԱԳՅԱՆ ՎԱՆԻԿ

ԲԱԲԱՅԱՆ ՆԱԻՐԱ

ԲԱԴԱԼՅԱՆ ԱՏՈՄ

ԳՐԻԳՈՐՅԱՆ ԱՐԱՄ

ԳՐԻԳՈՐՅԱՆ ԲԱՐՍԵՂ

ԴԱՎԹՅԱՆ ԱՆԴՐԱՆԻԿ

ԽԱԶԱՏՐՅԱՆ ՍԵՎԱԿ

(Handwritten signatures in blue ink)

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ՏԻԳՐԱՆ ՀԱԿՈՐՅԱՆ





ՀԱՍՏԻՔԱՏՈՒՑԱԿ
Գեղաշենի համայնքապետարանի աշխատակազմի

Հաստատված
 Համայնքի ավագանու 2019 թվականի
 դեկտեմբերի 13 ի N67-Ա որոշմամբ

Աշխատակիցների թվաքանակը՝ 16

Հ/ի	Կազմակերպության անվանումը	Հաստիցի անվանումը	Հաստիցի տեսակը	Պաշտոնի ծածկագիրը	հաստիքային միավոր	Պաշտոնային դրույթագրային	Հավելյալ մգ	Հավելյալ արժ	Աշխատակազմի ընդամենը
1	2	3	4	5	6	7	8	9	10
1	Համայնքի ղեկավար		Քաղաքական	-	1	340000			340000
2	Համայնքի ղեկավարի տեղակալ		Քաղաքական		1	270000			270000
3	Աշխատակազմի քարտուղար		Համայնքային ծառայության	1.2-1	1	272000		27200	299200
